

3729

1381

891.71

L-89

P-1914

1145

ԼԳԻՍՏՐՈՎ

# ՆԱՊՕԼԵՕՆԻ ≡ ՄԱՅԸ

ԴՐԱՄԱ 1 ԳՈՐԾ.



391.71  
L-89

2003

Թարգմանութիւն  
ԴԱԻԻԹ ԳՈՒԼԱԶԵԱՆԻ

հրատ. խմբ.  
„НОВОЕ ДѢЛО“-ի

2011

891.71  
L-89 W 1145

Reg. of ...  
30/10

ԼԳԻՍՏՆՆՈՎ

# ՆԱԳՈՒԼԵՍՆԻ ՄԱՅՐ

ԳՐԱԿԱՆ ԳՐԱԾԱ 1 ԳՈՐԾ.

1001  
4865 2



Թարգմանութիւն  
ԴԱԻԻԹ ԳՈՒԼԱԶԵԱՆԻ

հրատ. խմբ.  
„НОВОЕ ДВЛО“-ի

1120

**ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ**

**Նապօլէօն:**

**Լազ-Կազաս.**—Նապօլէօնի վերջին պարաօնեան:

**Մարօանդ.**—Կամերդիներ (ծառայ):

**Անօմարկ.**—Ցրանսիացի բժիշկ:

**Հուճօն Լօու.** — Անգլիացի Սէնա Հէլէնի հրամանատարը:

**Զինուորական.**—Ցրանսիացի:

**Տիկ. Բերսրան:**

# ՆԱՊՕԼԵՕՆԻ ՄԱՅՐ

ԴՐԱՄԱ 1 ԳՈՐԾ.

## 1 ԵՐԵՒՈՅԹ

Նապօլէօն, Լազ Կազաս եւ Մարտանդ:

ՆԱՊՕԼԷՕՆ. — (Նստած սեղանի առաջ) Լազ Կազաս, այդ ի՞նչ էք թագցնում:

ԼԱԶ ԿԱԶԱՍ. — Ոչինչ արքայ:

ՆԱՊՕԼ. — Լազ-Կազաս... ընկեր... դուք, չէ՞ որ, ստեղծ չը գիտէիք... տէք ինձ այդ գիրքը... ի՞նչու էք թագցնում...

ԼԱԶ ԿԱԶԱՍ. — Արքայ, խնդրում եմ, ձեռք մի տէք այս կեղտոտ հեղինակութեան:

ՆԱՊՕԼ. — (Ձեռք մեկնելով) Ձբանսիսիցն է, այնտեղից ամեն բան դիւրալի է... Մինչև անգամ վիշտը... (վերցնում է) Ա՛խ... Մալինին, իմ անշինջ թշնամին է, նեղացած է թէ ինչո՞ւ հրամանատար չը նշանակեցի... թվ գիտէ, ինչեր է գրել... կարող էք վերցնել, շատ քիչ ժամանակ է մնացել ապրելու համար, անկարելի է այսպիսի մանր բաների վրայ ուշադրութիւն դարձնել:

Ես միայն նրա համար ձեռքս առայ այդ գրքոյկը, որովհետև ֆրանսիայումն է տպւած, այնտեղից է...

Քեմը ներկայացնում է

Նապօլէօնի ընտկարանը Լօնդօնում, խորքում երկաթէ մանճակալ, վրան ընկած է Նապօլէօնի կապոյտ ծածկոցը, աջակողմը վառարանի մէջ կրակ է վառւած: Վառարանի գլխին ոսկէղօծ շքանակներով երկու պատկեր է կախած. Մարիա Լուիզայի և Հռոմի արքայի, վառարանի վրայ դրւած են ժամացոյց, և Հռոմի արքայի արձանը: Պատից կախած է մեծ արծաթեայ ժամացոյց, նրա կողքին մի փոքրիկ սեղան, որի վրայ դրւած են գրքեր և այլ իրեր... Ձախակողմն՝ Եւրօպայի քարտէզ, մէջտեղ սեղան, քարտէզի տակ բազմոց, նրա կողքին մի այլ սեղան գրքերով, թղթերով և գրական իրերով և երկու բարձր դամբարներ, կապոյտ աբաժուրներով: Երկու գուռ իրար յետևից, մինը դէպի նախասենեակ ուր գինւորն է կանգնած, միւսը դէպի սենեակ: Երկու լուսամուտ որտեղից ծոֆն է երևում:

**ՄԱՐՇԱՆԴ.**—Արդեօք, ձերդ մեծութիւնը վատ չի գգում իրեն, կանչէ՞ք բժիշկ:

**ՆԱՊՕԼ.**—Ինքը կը գայ: Մարշանդ, սուրճ բեր... (ընկնում է մտածութեան մեջ):

**ՄԱՐՇԱՆԴ.**—Ձերդ մեծութեան համար սուրճն արդէն պատրաստ է: Նահանգապետ Հուցօնը այստեղ էր և ձեր դրուժիւնն էր հարցնում...

**ՆԱՊՕԼ.**—Իմ պահապանս: Ո՛ւ, որքան է արագացնում մահս:

**ԼԱՁ ԿԱՁԱՍ.**—Արքայ, ի՞նչ հարկաւոր են այդպիսի սարսափելի մըտքերը... (Նայօլեօնը սուրճը ընդունում է և իսկոյն իջեցնում է գաւարը):

**ՄԱՐՇԱՆԴ.**—Ձերդ մեծութիւնը չէ՞ հաւանում սուրճը...

**ՆԱՊՕԼ.**—Չ'ը գիտեմ, մի ինչ որ հոտ ունի, կեղծած է, իսկականը չէ... Կօրվիզարը զգուշացնում էր, որ ոչինչ կեղծ չ'ընդունեմ... Մարշանդ, մի գաւար բնական սուրճը ոյժ է աւելացնում... գնիւր իսկականը... «մարտիւնականը»... ինքդ պատրաստիւր...

**ՄԱՐՇԱՆԴ.** — (Վախելով) Արքայ... այլևս փող չունենք...

**ԼԱՁ ԿԱՁԱՍ.**—(Ձեռք խփելով Մարշանդին) Սխալում ես... ի՞նչ ես ասում:

**ՆԱՊՕԼ.**—Մի թագցնէք, ճիշտ է ասում... (Մարշանդին) տարէք և ծախէք մի արծաթեայ գաւար... միայն ոսկէ արծիւը հանիր...

## 2. ԵՐԵՒԱՆԹ

Նրոնք եւ սիկ. Ռերեսան:

**ՏԻԿ. ԲԵՐՏՐԱՆ.** — (Մտնում է Նայօլեօնին, չորում է համբուրում է ձեռքը:) Լաւ էիք քնած, արքայ:

Արդեօք, չէ՞ նեղացրել ձեզ շոգը... երէկ տոթ եղանակ էր:

**ՆԱՊՕԼ.** — (Շոյելով նրա դուխը) Իմ թանկագին Բերտրան, գիտեմ, որ ինձ վրայ հոգս ես քաշում: Ասա, մանուկները ի՞նչ են անում... (Բերտրանը նայում է ոտքերի առաջ):

**ԲԵՐՏՐԱՆ.**—Մանուկները... ամեն տեղ մանուկներ են: Ես չը գիտեմ այնպիսի երկիր, ուր, այնպիսի մակերևոյթ, ուր նրանք երջանիկ ու զւարթ չը լինեն:

**ՆԱՅՕԼ.**—Ի՞նչպէս է փոքրիկ Ֆրանսիացիքն, որին Հուցօն Լօուն թոյլատրել է ազատ ման գալ կղզու վրայ...

**ԲԵՐՏՐԱՆ.**—Իմ փոքրիկ Նայօլեօնը — կենդանի է, առողջ է, սովորում է իր մեծ պետի անունը և սկզբնական «նա» ասում արդէն է:

**ՆԱՊՕԼ.**—Միչև որ կը լրացնէ, և կը սկսի ասել «պօ»-«լէ»-«օն», ես այն ժամանակ այլևս կենդանի չեմ լինի, իմ խղճուկ Բերտրան:

**ԲԵՐՏՐԱՆ.**—Արքայ, մի ասիր այդպիսի սարսափելի բաներ, թոյլ տուր մեզ, որոնք քեզ շրջապատում ենք, սիրում ենք, հոգանք, զւարճանանք և երբ ժամանակ կանցնի, քաղցր օրօր ասենք, միչև որ կը գայ վերջին վարկեանը... (Իջեցնում է զլուխը ձեռքերի վրայ եւ ասում է) ազատութեան վայրկեանը:

**ՆԱՊՕԼ.**—Այսպէս ասած մահաւան:

**ԲԵՐՏՐԱՆ.**—Կրկին, արքայ... ոչ գնդակները, ոչ եգիպտոսի տօթը, ոչ ձիւնապատ Ռուսաստանը քեզ չը յաղթեցին, և չը պատահեց քեզ մահը... և միթէ՞ այստեղ, մեր սեպհական տեղի վրայ մեզ մահ կը պատահի, այնտեղ ուր շրջապատում են քեզ քո բարեկամները... ոչ, արքայ, ես բոլորո-

Վին այլ ազատութեան եմ սպասում, այլ ազատութեան յեղափոխութեան...

**ՆԱՊՕԼ.** — Յեղափոխութեան, այո, յեղափոխութեան ես էլ եմ սպասում... միայն երազում... ես սպասում եմ, որ այս մեզ շրջապատող սարսափելի ալիքները կը պատուեն, ինչպէս Եբրայեցոց համար կարմիր ծովը, և առանց Հուցօն Լօուի նկատելու մենք կը լինեն այնտեղ... Կղզու վրայ կերևայ օգի մէջ սաւառնող նաւը և կը թռչենք քէպի սիրելի հայրենիք... Ես սպասում եմ, որ Սէնդ-Հէլէնի ժայռերը կը պայթեն և այնտեղից դուրս կը գայ մի նժոյգ, որի մէջքին կը կպչեմ և ինքնակամ կը թռցնէ ինձ քէպի իմ սիրելի և թանկագին Ֆրանսիան... երազներ... երազներ...

**ԲԵՐՏՐԱՆ.** — Ո՛չ, ոչ արքայ, մենք կը նստենք նաւի մէջ և յետևիցդ կը գանք:

**ՆԱՊՕԼ.** — Այդպէս, ջանիկս, իմ բարի Բերտրան, դուք շարունակ ուրախացնում էք, յոյսեր էք կառուցում սրտիս մէջ: Ո՛ւր է այժմս ժեներալ Բերտրանը:

**ԲԵՐՏՐԱՆ.** — Ամուսինս ձեր նժոյգին է յետևում: Նա ասում է, որ շատ ժամանակ է, ինչ որ դուք չէք ճանապարհորդել և ձին էլ կը փչանայ երկար սպասելով... (դրսից լսում է աղմուկ)

**ՆՈՒՑՕՆԻ ԶԱՅՆԸ.** — Փրէնջ դօղ...

**ԶԻՆԻՈՐ.** — Դու ինքդ անդրիական շուն...

**ՆԱՊՕԼ.** — Նուցօն Լօուն և իմ հին գվարդիայի Սանտինին կուռում են... (Մարզանդը կանգնում է դռան մօտ)

**ՆՈՒՑՕՆ ԼՕՈՒ.** — (Դրսից) Պէտք է ներս մտնեմ...

**ԶԻՆԻՈՐ.** — Անկարելի է...

**ՆԱՊՕԼ.** — (Յոգնած ձայնով) Ներս թող... (Բերտրանին) թանկագին Բերտրան, զնա պարտէզ, մի քանի ժամանակից յետոյ կարող ես գալ... (Բերտրանը համբուրում է Նապօլեօնի ձեռքը):

**ԲԵՐՏՐԱՆ.** — Յոյսով եմ որ հանգիստ կը լինէք...

**ՆԱՊՕԼ.** — Կաշխատեմ, զնա մանկիկս: (Բերտրանը գնում է):

### 3. ԵՐԵՒՈՅԹ

#### Նրանք և Հուճօն-Լօուն

**ՆԱՊՕԼ.** — Զեռքով նշան է անում Հուցօն Լօուօին, որպէսզի դռան մեջ կանգնի: Դռան մէջ կանգնեցէք, այս տեղ միայն բարեկամներ կարող են ներս գալ: Ի՞նչ էք ցանկանում:

**ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒ.** — Ժեներալ Բօնապարտ...

**ՆԱՊՕԼ.** — Ես ժեներալ Բօնապարտ եմ միայն իմ Ֆրանսիայի հաժարձակ զօրքերի համար, ձեր և ամբողջ աշխարհի համար իմպերատոր Նապօլեօնն եմ: Ի՞նչ էք ցանկանում:

**ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒ.** — Ես հրաման ստացայ...

**ՆԱՊՕԼ.** — Նրանք, որոնք ձեզ հրաման են ուղարկել կը հանգչեն ամբողջ մարդկութեան պատմութեան մէջ, իսկ Նապօլեօնի անունը, քանի որ կը փայլեն աստղերը երկնքում, չի կորզւի մարդկանց սրտերի խորքից: Կարճ կարեցէք, ինչ էք ցանկանում, ես հիւանդ եմ:

**ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒ.** — Պահանջում եմ, որ արձակէք ձեր նախկին գվարդիական զինւոր Կարլ Սանտինին:

**ՆԱՊՕԼ.** — Ինչո՞ւ համար:

**ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒ.** — Անդրիական զինւորը այդու մէջ ծառ կտրեց, և դրա համար Սանդինը նրան ապտակեց...

ԼԱԶ ԿԱԶԱՍ.—Հապա ի՞նչու էր կտրում, այնպէս էլ շատ քիչ սոււեր կայ այստեղ:

ՆԱՊՕԼ.—Ողորմելի Լազ Կազաս, դուք դեռ հարցնում էք ինչո՞ւ: Որովհետեւ այն ծառի տակն էր պաշտպանւում դժոխային շոգից յոգնած իմպերատոր Նապոլեօնը: Որովհետեւ այնտեղից շարունակ երևում էր...

ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒՆ.—Այդ չը գիտէի...

ՆԱՊՕԼ.—Դ՞հա: Չը գիտէիք: Այն ծառը շատ նման էր իմ հայրենիքի, Ֆրանսիայի կոպիտ ծառին: (Հռոցոն ինչ որ ուզում է ասել. Նապոլեօնը ձնօրով կանգնեցնում է) բաւական է: Ի՞նչ էք մտադիր Սանդիին հետ անել:

ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒՆ.—Ֆրանսիա կ'ուղարկւի:

ՆԱՊՕԼ.—Ֆրանսիա դէ որ այդպէս է մեծ ուրախութեամբ կըտամ, սակայն մինչ ճանապարհելը պէտք է տեսնեմ...

ՀՈՒՑՕՆ ԼՕՈՒՆ.—Այդ անկարելի է...

ՆԱՊՕԼ.—Անկարելի է... (բռնելով կուրծքը) Ինչպէս թէ անկարելի է, դուրս կորէք այստեղից... (իստերիկա)

#### 4. ԵՐԵՒՈՅԹ

Նրանք և բժիշկ, բացի Հուցօնից

ԼԱԶ ԿԱԶԱՍ.—Բժիշկ, բժիշկ, շուտով, իմպերատորը ուշաթափոււմ է...

ԱՆՏՕՄԱՐԿ.—(Մօտ վագելով Նապոլեօնին) Արքայ, արքայ... (Կայծակի արագութեամբ փոքր բաժակի մէջ կաթիլներ է կաթեցնում և մօտեցնում է Նապոլեօնի շքուրդներին): Արքայ... Ձերդ մեծութիւնը ինչպէս է զգում իրեն.

ՆԱՊՕԼ.—Շնորհակալ եմ, Անտօմարկ, շուտով բոլորիդ կազատեմ այս նեղութիւնից:

ԱՆՏՕՄԱՐԿ.—Նոր լուր ենք բերել, ուրախացէք արքայ, փառաւոր օրեր դեռ ևս սպասում են մեզ... եթէ...

ՆԱՊՕԼ.—Եթէ...

ԱՆՏՕՄԱՐԿ.—(Գաղտնի) Եթէ նորից շնչէք Ֆրանսիայի օդով...

ՆԱՊՕԼԷ.—Ո՛հ, Անտօմարկ, ի՞նչ երջանկութիւն:

ԱՆՏՕՄԱՐԿ.—Արքայ, հրամայեցէք ներս թողնեն պահապանին՝ անգլիացոց զօրականին...

ՆԱՊՕԼ.—Անգլիացոց զօրականին...

ԼԱԶ ԿԱԶԱՍ.—Արքայ, հաւատացէք բժշկին: Ես ոչինչ չը գիտեմ, սակայն զգում եմ, որ մի ինչ որ լաւ բան է լինելու:

ՆԱՊՕԼ.—Մարշանդ, հրամայիր, թող ներս գայ...

ՄԱՐՇԱՆԴ.—(Բացելով դռուը) Իմպերատորը պահանջում է անգլիական զօրականին... (ձայներ դրսից... «Անգլիացի պահապան» «անգլիացի պահապան» «անգլիացի պահապան»): Իմպերատորը պահանջում է զօրականին...

#### 5. ԵՐԵՒՈՅԹ

Նրանք և Անգլիական զօրական

(Երկար պառկայից յետոյ, ներս է գալիս հրացանը ձեռքին և կանգնում է Նապոլեօնի առաջ, բոլորը նրան են նայում):

ՆԱՊՕԼ.—Ի՞նչ կասես...

ՉԻՆԻՈՐ.—(Մի քայլ առաջ գնալով) Տու՛ն և ազատութիւն...

ՆԱՊՕԼ.—Ո՛հ, Աստած, ի՞նչ ասիր...

ՉԻՆԻՈՐ.—Մայրս Անգլիուսի էր, հայրս Ֆրանսացի, հայրենիքս է Ֆրանսիան և իմ միակ իմպերատորս Նապոլեօնը:

ՆԱՊՕԼ.—Շնորհակալ եմ, շնորհա-

կալ եմ... շնորհակալ եմ, այդպիսի բա-  
ւեր լսելը դիւրալի է:

ԼԱԶ ԿԱԶԱՍ.— Յրանսացի, տէք  
ձեր ձեռքը:

ՆԱՊՕԼ.— Ի՛նչպէս եկար այստեղ...

ՉԻՆԻՈՐ.— Ես կուում էի իմ իմպե-  
րատորի դրօշակի տակ: Երբոր ձեզ  
ձերբակալեցին և նաւով այս կողմն  
բերել մտադրեցին, ես էլ հէնց նոյն  
նաւի վրայ նաւաստի մտայ, գիտեմա-  
լով անգլիերէն այնպէս, ինչպէս մայրե-  
նի լեզուս: Ձեր թշնամիները շուտով  
խաբւեցին, և ահա ես եմ իմպերատո-  
րիս պահապանը...

ՆԱՊՕԼ.— Ինչո՞ւ էիր աշխատում  
այդ անել: Ի՛նչ ես ուզում դրանով  
ասել:

ՉԻՆԻՈՐ.— Արքայ, կղզու վրայ գրօս-  
նելիս, չէք նկատել հորիզօնի վրայ  
նաւու սոււեր, որի առագաստները  
անազին թռչունի թեկրի նման են և  
ահա ուր որ է մտադրելու է թռչել:

ՆԱՊՕԼ.— Ի՛նչպէս չէ, ամեն օր  
տեսնում եմ: Զարմացնում է: Ինչո՞ւ  
տեղից չի շարժուում... ճշմն է սպա-  
սում...

ՉԻՆԻՈՐ.— Ձեզ արքայ...

ՆԱՊՕԼ.— Ի՞նչ... Ի՞նչ... (դառն) սա-  
կայն... ես թեւեր չունեմ, ինչպէս պէտ-  
քէ թռչեմ:

ՉԻՆԻՈՐ.— Կղզու արեւմտեան կողմն  
մի մակոյկ կայ թաղցրած: Միթէ  
գրօսնելիս չէք նկատել, արքայ, մի քա-  
նի մարդ, որոնք անհող քնած են...

ՆԱՊՕԼ.— Այո, ձկնորսներ... ձկնորս-  
ներ:

ՉԻՆԻՈՐ.— Ձեր հաւատարիմներ: Կը  
նստէք այն նաւի մէջ... մի ժամայ  
մէջ մակոյկը ձեզ մինչև նաւը կը  
հասցնի...

ՆԱՊՕԼ.— Սակայն գրօսնելիս շարու-

նակ ինձ յետևում է անգլիական պա-  
հապանը:

ՉԻՆԻՈՐ.— Սրանից յետոյ այն դին-  
ւորը ես եմ լինելու...

ԼԱԶ ԿԱԶԱՍ.— Ձերդ մեծութիւնը  
լսում է...

ՄԱՐՇԱՆԻ.— Ոհ, Աստուծ, Յրան-  
սիան կարող է իր իմպերատորին նո-  
րից տեսնել...

ԱՆՏՕՄԱՐԿ.— Արքայ, զարձացէք  
յուսահատ մի նայէք ապագային: Նա  
ձեզ բաւականին երջանիկ ըտպէներ է  
խոստանում...

ՆԱՊՕԼ.— Ե՞րբ կարող ենք նաւը  
նստել...

ՉԻՆԻՈՐ.— Երբ ձերդ մեծութիւնը  
կը հրամայէ՝ այսպէս եմ ցանկանում:

ՆԱՊՕԼ.— Վեր ե կեցում, նրան օգ-  
նում են) Սա երազ չէ... միթէ՞ ես  
նորից կը տեսնեմ Յրանսիան... իմ սի-  
րուն... իմ հին Գվարդիան... իմ ժենե-  
րալներիս... սհ, զգում եմ... հէնց որ  
ոտքս կը դնեմ Ֆրանսիայի հողի վրայ,  
ինչպէս տիեզերական կոչ կը տարած-  
ւի և ամենքին ոտքի կը կանգնեցնի...  
և կառաջնորդեմ զօրքերիս դէպի յե-  
ղափոխութիւն, դէպի անուն և փառք:

ԼԱԶ ԿԱԶԱՍ.— Արքայ, ինչպիսի  
կրակ է այլուում ձեր աչքերում, ինչպի-  
սի ոյժ է նշմարուում ձեր ձայնի մէջ:

ԱՆՏՕՄԱՐԿ.— Թող ձերդ մեծութիւնը  
նշանակի օրն ու ժամը... այն հա-  
ւատը, որ տածում էք դէպի ձեր հայ-  
րենիքը, սքանչելի Յրանսիան, կը կազ-  
դուրի ձեզ, և դուք շատ լաւ կը զգաք...

ՉԻՆԻՈՐ.— Թող ձերդ մեծութիւնը  
ժամանակ նշանակէ, և ես նրանց կը  
պատիրեմ...

ՆԱՊՕԼ.— Այս գիշեր... այս գիշեր:  
Այլևս չեմ կարող սպասել... դէպի իմ  
սիրելի Յրանսիայ... յսնաջ... յսնաջ...  
(սիրտը նեղանում է) մաքուր օդ... (Տա-

նում են լուսաճուտի մօտ, պարկում և կուշետկայի վրայ... նայում է լուսամուտից... բծիկը մի ինչ որ դեղ է շնչել տալիս... երկար պառնգա...): Այլև... չեմ տեսնի... իմ Ֆրանսիան: Վերջանում է... վերջանում է բոլորը... զինւոր, եկ ինձ մօտ... (մեկնում է ձեռքը) տուր ձեռքդ, շնորհակալ եմ: Գնա... իմաց արա... թող նաև վերադառնայ առանց ինձ... հասկանում եմ, առանց ինձ...

**ՉԻՆԻՈՐ.**—Արքայ...

**ՆԱՊՕԼ.**—Առանց ինձ... համարած են իմ կեանքիս ըստ էության...

**ԱՆՏՕՄ.**—Ի՞նչ էք ասում, արքայ... դուք կրկին կը տեսնէք Ֆրանսիան... (Ներս է գալիս տիկ. Բերտրանը) ձեք հիւանդութիւնը...

## 6. ԵՐԵՒՈՅԹ

**Նրանք եւ Բերտրանը**

**ՆԱՊՕԼ.** — Մահաբեր է... զնայ... զնայ հաւատարիմս... ասա նրանց, որ իմպերատորը մեռնում է կապանքների տակ... կապանքների տակ... Անգլիացիք զերի դարձած... հոգին է աւանդում:

**ՉԻՆԻՈՐ.**—Արքայ... (Աջքերը լի արցունքներով գնում է):

**ԲԵՐՏՐԱՆ.**—Ախ, Աստուծո՛ւ...

**ՆԱՊՕԼ.** — Կրկին եկար, ջանիկս... տեսնում ես... տեսնում ես... իմ Ֆրանսիային այլևս չեմ տեսնի... ո՛հ, իմ զաւակ, Հոռմի արքայ... սիրելի արժեքիկ... գիտե՞ս ես զգում եմ... աւելի և աւելի զօրեղացնում է Բարձրեալը ոյժերս... կարծես... կարծես ծանր ըար է իջնում կրծքիցս... մարմնիցս...

**ԲԵՐՏՐԱՆ.**—Ո՛ր... հչ, արքայ... մենք դեռ կը տեսնենք Ֆրանսիան... տես-

նում ես առաջաստները բացած են... Գնանք... Իմպերիան սպասում է:

**ԼԱԶ ԿԱԶԱՍ.**—Ձեզ ասուածացնող ժողովուրդը սպասում է...

**ԱՆՏՕՄ.**—Ի՞նչ ժամանակաւոր թոյլութիւն է... Իմպերատոր Նապօլէօնը դեռ շատ անգամ կը թոցնէ արծիւներին իր թշնամիներէ պլխին...

**ՆԱՊՕԼ.** — (Կարծես քե մի ինչոր գերբնական ոյժ է ստանում) Ի՞նչպէս, ուրեմն... ես... ես... կրկին կարող եմ... (բարձրանում է ինչպէս առողջ ժամանակ) ուրեմն, Լազ-Կազաս, շուտով պատրաստե՛ք... Ռօստան նժոյգս... իմ հին զվարդիաս... դէմ առ դէմ ընթացէք... բարձրացրէք դրօշը... Լէֆէվր... Ուղի՛նձ... Նեցց... Իէննա... Առևտերլից... Վատերլւ... (Պատրաստ է քնկնել: Լազ-Կազասը, մարշալը եւ Անտոմարկը իջեցնում են տախտի վրայ):

**ԱՆՏՕՄԱՐԿ.**—Ողորմած Աստուծո՛ւ... վերջացաւ... հոգին աւանդեց... իջաւ Ֆրանսիայի արեգակը... (Լալիս է քախտի առաջ ջրած):

**ԲՈՒՈՐ.**—Ի՞նչպէս...

**ԼԱԶ ԿԱԶԱՍ.**—Իմ իմպերատոր... իմ բարերար... (լալիս է):

**ԲԵՐՏՐԱՆ.**—Մեռաւ... մեռաւ... հանգաւ Ֆրանսիայի ամենամեծ աստղը... (Լալով մօտենում է մեջ տեղի սեղանին եւ քնկնում է բազմոցի վրայ):

**ՄԱՐՇԱԼ Դ.**—(Մածկում է Նապօլէօնին սեւ մեծ պլեդ, քնկնում է ձեռքերը եւ խաչում է նրա ձեռները... համբուրում է եւ առանց մի որեւէ բառ արտասանելու լալիս է: Երկար պառնգաւ Լազ-Կազասը հանդարտ վեր է կենում, դուրս է գնում եւ դռները բաց է անում):

**ԼԱԶ ԿԱԶԱՍ.**—(Լալկան ձայնով): Իմ պերատորը... վախճանեց...

Կուլիաներում այս երկրաւոր երեք  
անգամ կրկնուում է: Հանում է սուրը  
և կանգնում է Բմպերատորի գլխա-  
վերի պահապան: Լսում է երեք  
անգամ Թմբուկի սովորական ձայնը,  
երեք պառզայով: Առաջին Թմբու-  
կից յետոյ ներս է գալիս անգլիա-  
կան զօրականը և կապիտանը, որոնք  
պահապան են կանգնում: Հապա  
երաժշտութեան սգաւորական մարշ,  
վարագոյր իջնելիս հետևեալ պատ-  
կեր՝ մէջ տեղի սեղանի մօտ, Բեր-  
տրանը գլուխը ձեռների վրայ իջե-  
ցրած, կամաց լալիս է: Անտօմարկն  
ու Մարշանգը Թախտի մօտ այս ու  
այն կողմից ընկած: Թախտը այն-  
պէս է դրած, որ ոտքերը դէպի հան-  
դիսականներն է մեկնած, Լազ կա-  
ղասը սուրը հանած, անշարժ կան-  
գնած է Նապօլէօնի գլխաւերն: Երա-  
ժշտութիւնը նւագում է:

**Վ.Ս.ՐԱ.Գ.ՈՅՐԸ** հանդարտ իջնում է:

**ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ:**

Երաժշտութիւնը շարունակում է:  
Վարագոյր բարձրանալիս Նապօլէօնը  
կանգնած է Թախտի վրայ իր սովո-  
րական պօզայով, մնացածներն ան-  
շարժ իրենց տեղերումն են:

**Վ.Ս.ՐԱ.Գ.ՈՅՐԸ** արագ իջնում է:



3728

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

ԹԻՖՆԻԶ  
Տպարան «ԷԳՕԽԱ» Մուղէյսկի պերեուլ. № 8  
1914

2013

